

ԵԿԵՂԵՑԻՆԵՐՈՒ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԽՈՐՀՈՒՐԴԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐՈՒ ԱՅՑԸ ԻՐԱՔ

Տ. Ավագ եպս. Ասատուրյանը ԵՀԽ-ի ներկայացուցիչների հետ

1984-ի ամառը Իրաքի քրիստոնյա համայնքներու պետերեն բաղկացած պատվիրակություն մը այցելեց Սրբազան Պապին ի Վատիկան և Եկեղեցիներու Համաշխարհային Խորհուրդի Քարտուղարության Կեդրոնը ի Ժնև: Այս առաքելության նպատակն էր՝ կրոնական գծով հայցելու վերոհիշյալ քրիստոնյա կեդրոններու աջակցությունը ևս, Իրաքի տարած հարատև խաղաղասիրական որոնումներու ի նպաստ: Պատվիրակության մաս կկազմեր նաև թեմիս բարեխնամ առաջնորդ գերաշնորհ Տ. Ավագ եպս. Ասատուրյանը:

Կալլածոց և Կրոնից Հարցերու Նախարարության հրավերով, 11—19 հունիս Պաղտատ ժամանեցին Եկեղեցիներու Համաշխարհային Խորհուրդի ներկայացուցիչները, իբրև փոխադարձ այցելություն: Իրաքի մեջ

իրենց կեցության ընթացքին անոնք հյուրը եղան Կալվածոց և Կրոնից Հարցերու Նախարարության: Պատվիրակության անդամներն էին.

Տիար Նինան Քոշի՝ վարիչ-տնօրեն Եկեղեցիներու Համաշխարհային Խորհուրդի միջազգային հարաբերությանց (Հնդկաստանեն):

Տոքթ. Ղասսան Բուպեյզ՝ քարտուղար միջեկեղեցական խորհուրդի, Մերձավոր Արևելքի Հանձնաժողովին (Լիբանանեն):

Տիար Տվեյն Էիս՝ ընդհանուր քարտուղարի օգնական, Ամերիկայի Միացյալ Նահանգներու Եկեղեցիներու Ազգային Խորհուրդի:

Տոքթ. Մայքլ Թրենսքի՝ Արևմտյան Գերմանիայեն:

Պատվիրակության անդամները 13 հունիս ուրբաթ առավոտյան այցելեցին հայոց Առաջնորդարան և մասնակցեցան ս. պատարագի արարողության: Առաջնորդ սրբազան հայրը հավուր պատշաճի քարոզ մը տվավ՝ բնաբան ընտրելով «Երանի խաղաղարարաց, զի նոքա որդիք Աստուծոյ կոչեսցին» (Մտթ. Ե 9): Քարոզի վերջավորության սրբազան հայրը բարի գալուստ մաղթեց հյուրերուն թե՛ հայերեն և թե՛ անգլիերեն լեզուներով:

Հետ պատարագի առաջնորդ սրբազան հոր և Ազգային Կեդրոնական Վարչության անդամներու ընկերակցությամբ պատվիրակությունը այցելեց Մեյտան թաղի (պատմական նշանակություն ունեցող սրբավայր) Ս. Աստվածածին եկեղեցին, ապա՝ գաղութին պատիվ բերող Ազգային ծերանոցը, կառուցված մեծ բարերարուհի հանգուցյալ տիկ. Ղեճինե Կարապետ Իաքենտերի անձնական ծախսով: Երկու վայրերու մեջ ալ հյուրերը մեծ հետաքրքրությամբ հետևեցան առաջնորդ սրբազան հոր տված բաբացատրություններուն: Հյուրերը գնահատանքով արտահայտվեցան իրենց այցելած հայկական վայրերու վայելչությանց մասին:

Կեսօրին՝ ի պատիվ հյուրերուն, ճաշի հրավեր տրվեցավ Առաջնորդարանի դահլիճին մեջ: Սեղանի վրա խունկ առին առաջնորդ սրբազան հայրը, Ազգային Կեդրոնական Վարչության ատենապետ տոքթ. Պողոս Պողոսյանը, ինչպես նաև հյուրերու անունով տիար Նինան Քոշի: Ապա սրբազան հայրը մտերմիկ մթնոլորտի մեջ հուշանվերներ բաժանեց հյուրերուն:

Հարգելի հյուրերը բարձր տրամադրությամբ ու լավագույն տպավորություններով բաժնվեցան Առաջնորդարանեն:

ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ՀԱՅՈՑ ԻՐԱՔԻ